

6 միլիոն 294 հազար 268 թալէս ծախք կլինէր, այնպէս որ՝ միջին հաշուով՝ ամէն վարժապետ տարին 191 թալէս ուճիկ կընդունէր:

Ուրիշ շատ բաներ կընայինք ըսել եւրոպայի դպրոցներուն ու վարժապետանոցներուն վրայ, եւ գուցէ ուրիշ ատեն կըսեմք. բայց առ այժմ՝ այսքանս միայն միտք ձգեմք որ եթէ եւրոպական ազգաց այսչափ հարկաւոր կճանչցուին վարժապետանոցները, սրչափ եւս առաւել հարկաւոր պիտի համարուին մեր ազգին, յորում գրեթէ անկարելի է տակաւին մէկ ժողովրդական դպրոց մը ցուցընել որ բազմաթիւ աշակերտներ ունենայ, եւ միանգամայն քաջահմուտ վարժապետներով կառավարուի:

Մեզի ամենահարկաւոր կերելի որ ազգերնիս ունենայ գոնէ մէկ վարժապետանոց մը իհոստանդնուպօլիս, յորմէ կարենան եւ-

նել ընտիր վարժապետներ՝ ոչ միայն մայրաքաղաքին ազգային դպրոցաց համար, հապա նաեւ բոլոր օսմանեան տէրութեան հայաբնակ քաղաքներուն ու գեղերուն: Նոյնպէս եւս մէկ վարժապետանոց մը իՏփիսիս, որ քաջակիրթ վարժապետներ հասցընէ բոլոր կովկասեան եւ Անդրկովկասեան նահանգներուն: Իսկ այս կողմերու մանր դպրոցներուն առ այժմ՝ վարժապետանոցի տեղ կրնան ըրանել՝ գլխաւորապէս Լաղարեան ձեմարանը, եւ ապա ըստ ժամանակին գուցէ նաեւ նորահաստատ Խալիպեան ուսումնարանը:

Վերջապէս եթէ մեր ազգը կարօտ է ուսումնական եւ բարոյական կրթութեան, ուստի եւ բարեկարգ ժողովրդական դպրոցներու, անպատճառ պէտք է ազգային վարժապետանոցներ ունենայ, եւ այս բանիս համար չլինայէ ոչ ստրկի եւ ոչ աշխատութեան:

Ա Ռ Ա Կ

Ն Ա Պ Ա Ս Տ Ա Կ - Յ Ո Ր Ս Ի .

Օր մը անտառին  
 Խառնախուժան գազանները  
 Խօսք ոյժ մէկ ըրին  
 Առնուլ արջէն իրենց սխը .  
 Գոռում գոչումով  
 Արջն անտառէն գուրս քըշեցին ,  
 Դաշտին մէջ ձորի մը քով  
 Խըղգեցին զինքն ըսպաննեցին ,  
 Ու սկըսան՝ վրբան թափած՝  
 Խըլել իրենց մէկմէկ բաժին :  
 Մէյմ՝ ալ նայիս՝ նապաստակին մէկն եկեր  
 Արջուն ահանջը խածեր՝ քաշքըշելու վրբայ էր .  
 « Ծճ գուն ուստի բուսար ըսին , անիրաւ ,  
 « Որսին ատենը մեզնէ ո՞վ քեզ տեսաւ :  
 — Կեցէք եղբարք , պատասխանեց մեր քաջը .  
 « Հապա լեռնէն ո՞վ էր քըշողը զարջը .  
 « Հաւատացէք , ես էի որ վախ տըւի  
 « Արջուկ աղբօրն՝ ու ճանկերնիդ ձըգեցի » :  
 Նապաստակին պարծանքն էր սուտ եւ ունայն .  
 Բայց եւ այնքան հաճոյ եղաւ բազմութեան  
 Որ արջուկին ահանջին  
 Կըսօրն անոր թողուցին :

Պարծենկոտին վրբան ալ շատ մարդ կըխընտայ ,  
 Բայց շատ անգամ անոր գովեստ ու փող կուտայ :